


ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ՆԱՄԱԿ ԱՂՔԱՏՆԵՐՈՒ ՄՆԻԹԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Արդ, ո՞ր է հարուստներու ուրախութիւնը եւ կամ անոնց մխիթարութիւնը, ո՞վ աղքատ, որ կը ցանկաս եւ կը տենջաս եւ կը տխրեցնես քու հեշտ եւ խաղաղ կեանքդ, ինքզինքդ դժբախտ մը եւ թշուառակամ մը կը նկատես եւ կ'արհամարհես քու թանկագին հաստատութիւնդ: Գողերէն վախնալու կարիքը չունիս եւ ոչ ալ աւազակներէն երկիւղելու: Պէտք չունիս մտահոգուելու ո՛չ դաշտին խտտերով եւ ոչ ալ լեռներու արօտավայրերով: Պէտք չունիս հովիւներու նենգութենէն վախնալու եւ ոչ ալ գազաններու յափշտակութենէն: Պէտք չունիս բռնաւորներու բռնութիւններէն եւ ոչ ալ իշխաններու կալանքներէն դողալու: Նախանձոտները չեն նախանձիր քեզի, քսակահատները չեն խաբէր քեզ, ոչ ոքէ կը վախնաս եւ ոչ ալ կ'անհանգստանաս: Իշխաններու վախը եւ տէրերու բարկութիւնը չեն կրնար սարսափեցնել աղքատը, ոչ ոք կրնայ կողոպտել աղքատը եւ կամ նեղել զայն եւ սպառնալ անոր: Հարուստը անհանգստացած է եւ անհազանգի տակ կը գտնուի, իսկ աղքատը կը ծաղրէ զայն: Հպարտ իշխանը ամբարտաւան է հարուստին նկատմամբ, իսկ աղքատը անկարեւոր կը նկատէ զայն: Երկիրը լեցուն է գողերով եւ աւազակներով, բայց աղքատը չի վախնար անոնցմէ: Հրապարակները լեցուն են քսակահատներով եւ բռնաւորներով, բայց աղքատը չի մտահոգուիր անոնցմով: Դատաւորները գայլ եւ գազան դարձած են, բայց աղքատը չի մտահոգուիր անոնցմով, որովհետեւ չքաւորութեան պատճառաւ, իր կեանքը մեծապէս խաղաղ է, զերծ մտահոգութիւններէ, ազատ բոլորին դիմաց, առանց վախի, առանց նախանձի, առանց դիսի եւ հեռու շատ մը մոլութիւններէ:

ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ


ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳ



ՊԼՏՎՐԼԻ ԽՈՐՀՈՐԴԻՆ ՀՎՏԱՆՈՒՄԸ
Ս. Պատարագի խորհուրդով՝ առաջին հերթին կը յիշատակենք Աստուածորդոյն Մարդեղութեան Խորհուրդը. Քրիստոս մարդացաւ, որպէսզի մարդը վերստին բարձրանայ աստուածաստեղծ այն պատուանդանին, ուրկէ ինկած էր ան նախածրնողներու մեղանչումէն ետք: Այդ իսկ էր Աստուածորդոյն առաքելութիւնը եւ այդ առաքելութեան ամբողջացումը պիտի ըլլար Անոր Փրկագործութեան Խորհուրդը՝ Ս. Պատարագումով:
Պատարագը անարհիւն զենումն է Քրիստոսի, Փրկագործութեան հոգեզմայլ Խորհուրդն է ան, որ կը կատարուի մեր մեղքերու քաւութեան եւ հոգիներու փրկութեան համար:
² Պատարագ կը նշանակէ զոհ, ընծայ նուէր: Ս. Պատարագի խորհուրդով Քրիստոս որպէս...
Շարունակելի



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ



ՔՈՒ ԽՕՍՔԻ ԽՄ ՈՏՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ՃԷ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 4 ՓԵՏՐՈՒԱՐ 2024 ԹԻԻ 5

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
Ես. 63.18-64.12: Տիտ. 1.1-11: Յհ. 7.37-52

ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ 7. 37-52

Տօնին վերջին եւ հանդիսատր օրը, Յիսուս ոտքի կանգնած՝ բարձրաձայն կ'ըսէր. «Ով, որ ծարաւ է՝ թող ինձի գայ եւ խմէ: Ով, որ ինձի կը հաւատայ, ինչպէս Սուրբ գիրքը կ'ըսէ. «Անոր սիրտէն կենսատու ջուրի գետեր պիտի բխին»:
Յիսուս ասիկա կ'ըսէր Հոգիին համար, որ իրեն հաւատացողները պիտի ընդունէին, իսկ Հոգին տակաւին չէր տրուած, քանի Յիսուս փառաւորուած չէր:
Ժողովուրդէն ոմանք, երբ լսեցին այս խօսքերը, ըսին. «Ասիկա է ճշմարիտ մարգարէն»:
Ուրիշներ կ'ըսէին. «Քրիստոսն է»:
Իսկ ոմանք ալ կ'ըսէին. «Միթէ Գալիլեայէ՞ն պիտի գայ Քրիստոսը: Սուրբ գիրքը չ'ըսէ՞ր, թէ Քրիստոս Դաւիթ թագաւորի սերունդէն պիտի ըլլայ եւ Դաւիթի քաղաքին՝ Բեթլեհեմի մէջ պիտի ծնի»:
Եւ Յիսուսի պատճառով տարակարծութիւններ յառաջ եկան ժողովուրդին մէջ: Ոմանք ուզեցին ձեռքաւարել զինք, բայց ոչ ոք համարձակեցաւ ձեռք զարնել:
Երբ տաճարին պահակները վերադարձան, աւագ քահանաներն ու փարիսեցիները հարցուցին անոնց. «Ինչո՞ւ զինք հոս չբերիք»:
Պահակները պատասխանեցին. «Այս մարդուն պէս խօսող, երբեք չենք տեսած»:
Փարիսեցիները ըսին. «Ի՞նչ: Դո՞ւք ալ խաբուեցաք: Իշխանաւորներէն կամ փարիսեցիներէն, ոեւէ մէկը հաւատա՞ց անոր: Մեր Օրէնքը չգիտցող տգէտ ամբոխը միայն հաւատաց: Անոնք արդէն իսկ նզովուած են»:
Նիկողեմնոս, փարիսեցիներէն մէկը, որ նախապէս գիշերով եկած էր Յիսուսի մօտ, ըսաւ անոնց. «Արդեօք մեր օրէնքը մարդս կը դատէ՞ նախքան զինք լսելը եւ զիտնալը, թէ ի՞նչ ըրած է»:
Անոնք պատասխանեցին Նիկողեմնոսի. «Միթէ դո՞ւն ալ Գալիլեայէն ես: Քննէ՛ Սուրբ գիրքերը եւ պիտի տեսնես, թէ Գալիլեայէն մարգարէ չ'ելլեր»:
Ապա ամէն մարդ իր տունը դարձաւ:

ՃՐԱԳ ՇԱՐԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ Jerak ճրագ թերթ
ՃՐԱԳ-ը կը պատրաստէ՝ Սարգիս Ա. Քեկյ. Սարգիսեան

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՐ ԶԱՅՐԱՊԵՏ

Ս. Սահակ Պարթև Ս. Գրիգոր Լուսաւորիչի տոհմէն, Մեծն Ներսէս Կաթողիկոսի որդին էր: Անոր ապրած կեանքի, վարած հայանպաստ քաղաքականութեան մասին մանրամասն տեղեկութիւններ կը հաղորդէ հինգերորդ դարու պատմիչ՝ Ղազար Փարպեցիին իր «Հայոց պատմութեան» աշխատութեան մէջ:

Սահակ Պարթև Հայրապետ ծնած է Կեսարիա, 384 թուականին: Սուրբը կը ստանայ յունական կրթութիւն եւ կը դառնայ հմուտ ժամանակակից երաժշտական ու հոնտորական արուեստին եւ փիլիսոփայութեան: Ս. Սահակ կ'ապրի իր հօր հոգածութեան ներքեւ: Թէեւ քաջ գիտակ էր յունարէն, ասորերէն եւ պարսկերէն գրականութեան, բայց աւելի ինքնուրու էր Սուրբ Գիրքի ընթերցանութեան: Կը սիրէր աղօթել եւ լեցուն էր Աստուծոյ Հոգիով ու շնորհներով: Չափահաս դառնալէն ետք շրջապատը կը ստիպէ, որ Ս. Սահակ Պարթև մնայ աշխարհական, որպէսզի շարունակուի Լուսաւորիչի տոհմը: Ան յաճախ Աստուծմէ կը խնդրէ, որ իրեն արու գաւակ մը պարգեւէ: Սակայն կը ծնի Սահականուշը:

Վաղարշապատ մայրաքաղաքի մայր եկեղեցւոյ մէջ Աւագ Հինգշաբթի օր, պատարագի ընթացքին, Ս. Սահակ, որպէս սարկաւագ պէտք է սպասաւորեր:

Պատարագի աւարտին, երբ ան նստած էր Ս. Սեղանին մօտ, վրան թմրութիւն մը կու գայ: Աստուծոյ հրեշտակը լուսաւոր մարդու կերպարանով կ'երեւի եւ կը յայտնուի, որ պիտի դադարի Լուսաւորիչի տան քահանայապետութիւնը, իսկ Արշակունեաց թագաւորութիւնն ալ պիտի խափանուի:

Ս. Սահակ կը նուիրուի քահանայապետական կարգին եւ միաժամանակ կը հոգայ եկեղեցւոյ պեղծութիւնը: Իր Սահականուշ դուստրն ալ կնութեան կու տայ Համագասպ Մամիկոնեանին:

387-ին, կը ձեռնադրուի կաթողիկոս: Հակառակ տիրող քաղաքական անբարենպաստ պայմաններուն, հայոց Վոստանայոց թագաւորի եւ Ս. Սահակ կաթողիկոսի համատեղ ջանքերով երկիրը կ'ապրի խաղաղութեան մէջ ու կը բարգաւաճի: Վոստանայոց թագաւորի օգնութեամբ ձեռնամուխ կ'ըլլայ բազմաթիւ վանքեր ու եկեղեցիներ կառուցելու եւ միաժամանակ կը նորոգէ Ս. Հովսիսիմեանց վկայարանը: Որոշ ժամանակ ետք միաբանելով Ս. Մեսրոպի հետ կը գրադի հայոց նշանագիրներ գտնելու սուրբ գործով: Իր աշակերտները կ'ուղարկէ գանազան քաղաքներ, որպէսզի գտնեն բազմաթիւ օգտակար գիրքեր, հայերէնի թարգմանեն եւ գործածեն հայոց դպրութեան մէջ: 417-ին Ս. Սահակ կը դիմէ Կայսեր եւ Կ. Պոլսոյ պատրիարքին, իր թոռան՝ Վարդան Մամիկոնեանի հայոց սպարապետ Բանչնալու ինդրանով: Կայսրն ու Պատրիարքը յարգելով Հայրապետը կ'ընդառաջեն անոր ինդրանքին:

Հ Ո Գ Ե Ի Ո Ր Պ Ա Տ Գ Ա Ս

ՈՒՆԵՅՈՒՆ ԶԵՉԻՆՎ ՏԻՐՈՋ ՅԱՆՉՆԷ

Աշակերտները Յիսուսի ըսին. «Հոս գրեթէ ոչինչ ունինք, բացի հինգ հացէ եւ երկու ձուկէ» (Մտ. 14.17): Աշակերտները կը մտածէին, որ իրենց ունեցածը ոչինչ է: Բայց Յիսուս սորվեցուց անոնց իրենց «ոչինչ» նկատած հինգ հացերն ու երկու ձուկերը դնել իր տրամադրութեան ներքեւ, որպէսզի այդ «ոչինչ» նկատուած ուտելիքով կերակրէր հսկայ բազմութիւն մը:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ Ո Գ Ե Ի Ո Ր Դ Ա Ս Ը

Երբեք չմտածենք, որ բան մը չունինք Տիրոջ բերելիք: Տերը մեզմէ մեծ բաներ չի պահանջեր: Իր պահանջածը մեզմէ մեր պատրաստակամութիւնն է, մեր փափաքն է, մեր կամեցողութիւնն է, բայց մանաւանդ, մեր ունեցած չնչին բանը իր տրամադրութեան ներքեւ դնելն է: Կը բաւէ, որ ուրիշին օգտակար դառնալու կամեցողութիւնը ունենանք, եւ մեր ունեցած չնչինը (նիւթական, թէ կարողութիւն իբրեւ) Աստուծոյ յանձնենք եւ ահա Աստուծոյ մեզ պիտի գործածէ անօթի հոգիներ կշտացնելու համար, մեծ կարիքներ գոհացնելու համար:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ'ՈՒՋԵՍ...

Երբ Աստուծմ օգնութիւն կ'ուզես, Կարդա՛ ՍԱՂՄՈՍ 54

Փրկէ՛ զիս, ո՛վ Աստուած, դուն՝ որ փրկիչ ես: Պաշտպանէ դատս, դուն՝ որ հօգր ես: Լսէ՛ աղօթքս, ո՛վ Աստուած, ակա՛նջ տուր խօսքերուս: Ամբարտաւան մարդիկ վրաս յարձակեցան, անգութ մարդիկ կ'ուզեն վերջ տալ իմ կեանքիս, առանց նկատի առնելու քեզ, ո՛վ Աստուած:

Բայց դուն, ո՛վ Աստուած, օգնականս ես, միակ պաշտպանս ես, Տէ՛ր: Թշնամիներու խորհած չարիքը դուն իրենց գլխուն թափէ, եւ բնաջնջէ զիրենք, դուն որ հաւատարիմ ես: Կամաւոր կերպով քեզի զոհ պիտի մատուցանեմ, երախտիքս պիտի յայտնեմ քեզի, Տէ՛ր, ինչպէս որ կը վայելէ, որովհետեւ զիս փրկեցիր բոլոր նեղութիւններէս, եւ ես թշնամիներու անկումը տեսայ:

ԱՍՏՈՒՍԱՇՈՒՆՉԸ

«Այգին տարին միայն մէկ անգամ պտուղ կու տայ, իսկ Աստուածաշունչը տարուան բոլոր ամիսները եւ ամսուան բոլոր օրերը պտուղ կու տայ, անդադար կերպով կենսատու վարդապետութիւն բխեցնելով զայն քննողներուն: Երբ հողը կը հնձուի՝ կը սպառի, երբ պտուղը կը քաղուի՝ կը վերջանայ, մինչդէռ Աստուածաշունչը միշտ կը հնձուի եւ սակայն մեկնիչներ հոն միշտ կը գտնեն հասկ իրենց համար: Աստուածաշունչին այգին ամէն օր կը քաղուի, բայց հոն երբեք ողկոյզները չեն պակսիր» (Եփրեմ Խուրի Ասորի):